

Contact Information:

Armenian Educational Foundation
600 West Broadway, Suite 130
Glendale, California 91204
Telephone: (818) 242-4154
Email: aef@aefweb.org
Website: www.aefweb.org

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Մամլո հաղորդագրություն

ՀԿՀ-ն կրթաթոշակներ է տրամադրում Հայաստանում և Արցախում

Ավելի քան 68 տարի է՝ Հայ կրթական հիմնարկությունը /ՀԿՀ/ ֆինանսական աջակցություն է ցուցաբերում հայ ուսանողներին և ուսումնական հաստատություններին: ՀԿՀ-ի կարևորագույն և գլխավոր ծրագրերից մեկը Հայաստանի և Արցախի պետական համալսարանների ուսանողների ամբողջական վարձի չափով կրթաթոշակների տրամադրումն է: 2007 թ.-ին՝ կրթաթոշակային նոր ծրագրի իրականացման առաջին տարում, ՀԿՀ-ի կրթաթոշակառուների թիվը սահմանափակված էր 21-ով, իսկ այս տարի այդ թիվը հասել է 248-ի: Հայ Կրթական հիմնարկությունը նաև հովանավորում է սիրիահայ ուսանողներին՝ վճարելով ուսման վարձի 40 %-ը, ինչպես նաև տրամադրում է 23 կրթաթոշակ՝ Դասավանդիի Հայաստանի ծրագրի մասնակիցներին:

«Այս կրթաթոշակային ծրագրի հաջողությունը մեծապես կախված է նաև բազմաթիվ նվիրատուների մեծահոգի աջակցությունից: Մենք երախտասպարտ ենք այն բոլոր անհատներին, ովքեր տարեկան 1000 դոլար են նվիրաբերում՝ հովանավորելու յուրաքանչյուր ուսանողի ուսման ամբողջական վարձը». նշեց ՀԿՀ-ի նախագահ **Հերմինե Փախանյանը:**

ՀԿՀ-ի երևանյան գրասենյակը 1400 տրված հայտադիմումներից ընդունել է 689 որակավորում ունեցող կրթաթոշակային հայտադիմումներ:

Յուրաքանչյուր հայտադիմումի մեջ ներառված տեղեկատվությունը մուտքագրվել է կրթաթոշակի համակարգչային մատրիցայում՝ դասակարգելու կրթաթոշակային ծրագրի թեկնածուներին՝ հաշվի առնելով տարբեր չափանիշներ, ինչպիսիք են՝ ֆինանսական կարիքներ, միայնակ ծնող, բազմազավակ ընտանիքներ, գյուղաբնակ ուսանողներ, ծնողների մասնակցությունը արցախյան պատերազմին, զինվորական ծառայություն, կամավորական աշխատանք, գիտական ձեռքբերումներ և այլն: Համակարգչային մոդելի կողմից ընտրված լավագույն 310 ուսանողները հրավիրվեցին հարցազրույցի: 11-օրյա հարցազրույցներից հետո, կրթաթոշակային հանձնաժողովը ընտրեց 139 նոր ուսանող, ովքեր կստանան կրթաթոշակ՝ ամբողջ ուսման վարձի տեսքով: Բացի այդ, ՀԿՀ-ն նաև կվճարի 109 ընթացիկ կրթաթոշակառուների ամբողջ ուսումնական վարձը:

Լուս Անջելեսից ՀԿՀ-ի մի շարք անդամներ մասնակցեցին հարցազրույցի փուլին:

«Դա մեծ պարգև էր, բայց և բավականին դժվար ու զգացմունքային փորձառություն: Ես ցանկանում եմ, որ մենք ունենանք բավականաչափ միջոցներ՝ բոլոր ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու համար». ասաց ՀԿՀ-ի նախկին նախագահ **Աիդա Եղիազարյանը:**

Կրթաթոշակառուների ընտրությունից հետո, ՀԿՀ-ը փոխանցում է ուսման վարձը անմիջապես տվյալ համալսարանի հաշվեհամարին՝ ուսանողի անունով: ՀԿՀ-ի կրթաթոշակի շարունակման պահանջներից մեկը գնահատականների շարունակական բարելավումն է, կամավորական աշխատանքն ու հասարակական ակտիվությունը: 2018 թ.-ի սեպտեմբերի 24-ին ՀԿՀ-ը Երևանում կիյուրընկալի բոլոր կրթաթոշակառուների և հովանավորներին և շրջանավարտներին:

2014 թ.-ից ի վեր՝ ՀԿՀ-ը ավելի քան 1 միլիոն դոլարի կրթաթոշակ է տրամադրել ԱՄՆ-ի, Լիբանանի, ՀՀ-ի տարբեր համալսարաններում սովորող ուսանողներին:

ՀԿՀ-ի և կրթաթոշակային ծրագրին աջակցելու նպատակով հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել ՀԿՀ-ի գրասենյակ հետևյալ հեռախոսահամարով՝

818-242-4154 կամ կապվել էլ. փոստի միջոցով. էլ. հասցե՝ **aef@aefweb.org**: